

Արդվի

Մակերես՝ 8,2կմ²

Բնակչություն՝ 240

Գյուղ Ալավերդու տարածաշրջանում, Ալավերդի քաղաքից 9կմ հարավ-արեւմուտք, մարզկենտրոնից գտնվում է 45կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Արդու, Արտվի, Մելիքգյուղ, Մելիքբյանդ անվանումները: Հնում մտել է Գուգարք աշխարհի Տաշիրք գավառի մեջ: Ըստ տեղացիների գյուղն հնում կոչվել է Մելիքգյուղ: Նոր ժամանակներում հանդիպում է նաեւ Արդու գրությամբ: Հովհան Օձնեցին իր ծննդավայրից եկել է այստեղ, կառուցել ճգնարան եւ եկեղեցի: Ըստ ավանդության՝ Օձունից հեռանալիս նա անիծել է այն եւ Մելիքգյուղ գալով անվանել է Առտվի, այսինքն՝ Մելիքն առա եւ Օձունը տվի:

Գյուղում կան երկու եկեղեցիներ: Դրանցից մեկը Հովհան Օձնեցու կառուցած ս. Հովհաննես վանքը (718-728թթ), որը վերակառուցվել է 17-րդ դարում: Եկեղեցու ներսում գտնվում է Հովհաննես Օձնեցու գերեզմանը: Մյուսը ս. Հարություն եկեղեցին է՝ կառուցված 10-րդ դարում: Վերջին դարերում Արդվին եղել է Լոռու մելիքների կալվածքները:

Գյուղը տեղադրված է Դեբեդ գետի բարձրադիր ձախափնյա սարավանդում, անտառապատ լեռան ստորոտում՝ ծովի մակարդակից 1450մ բարձրության վրա: Գյուղի մոտ գտնվող ձորը կոչվում է Վիշապաձոր: Կլիման բարեխառն լեռնային է, տեւական, ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Տարեկան թափվում են 600-700մմ մթնոլորտային տեղումներ: Ագրոկլիմայական տեսակետից ընկած է մասնակի ոռոգման գոտում:

Ունի սառնորակ աղբյուրներ, որոնք օգտագործվում են որպես խմելու ջուր: Ունի բազմամետաղների հանքերի առանձին ելքեր, որոնք չունեն արդյունաբերական նշանակություն: Գյուղի բնակչության նախնիների մի մասը տեղափոխվել է Ղարաբաղից եւ Բերդից: 1970 թ-ին գյուղն ունեցել է 236 բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների 2005 թ-ին համայնքի բնակչությունը կազմել է 185 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 46%, կանայք՝ 54%: Ունի միջնակարգ դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:

Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը (153հա): Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես արոտավայրեր՝ կազմելով 437հա: Գյուղի մասնագիտացման ուղղությունը անասնապահությունն է: Չբաղվում են խոշոր եղջերավոր անասնաբուծությամբ, մեղվաբուծությամբ, թռչնաբուծությամբ: Չբաղվում են նաեւ դաշտավարությամբ, պտղաբուծությամբ (տանձ, խնձոր, կեռաս), մշակում են բանջարաբոստանային, կերային, հացահատիկային կուլտուրաներ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքների իրացումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: